

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

եռաչափ մոդելավորումը, պղնձի և մոլիբդենի տարածական բաշխման վերլուծությունը, ինչպես նաև ֆլուտացիոն փորձարկումների արդյունքների գնահատումը, որոնք հիմք են հանդիսացել պոչերի հետագա վերամշակման նպատակահարմարության հիմնավորման համար: Ատենախոսության մեջ առաջարկված լուծումները հաշվի են առնում Հայաստանի լեռնային ռելիեֆի առանձնահատկությունները, պոչամբարների մեծ խորությունները և դրանց շահագործման ընթացքում անվտանգության ապահովման պահանջները: Միաժամանակ առաջարկվել են պոչամբարների դատարկման սարքի կատարելագործված տարբերակներ, որոնք հնարավորություն են տալիս բարձրացնել արտադրողականությունը և նվազեցնել աշխատանքների արժեքը: Արդյունավետության տեսանկյունից արժեքավոր է իրականացված տեխնիկատնտեսական հիմնավորումը, ըստ որի՝ առաջարկվող տեխնիկական լուծման կիրառման դեպքում պոչերի հեռացման ինքնարժեքը կարող է նվազել շուրջ 23,9 %-ով՝ համեմատած հայտնի տեխնիկական տարբերակների հետ: Այս արդյունքը վկայում է աշխատանքի կիրառական կարևոր նշանակության մասին: Լեռնահանքային ձեռնարկությունների գետային տիպի կոնսերվացված և գործող մեծածավալ պոչամբարների դատարկման ռացիոնալ եղանակի մշակումը, կապված պոչամբարներից պոչային նստվածքների հեռացման և դատարկված պոչամբարների կրկնակի օգտագործման հետ արդիական են և ունեն զգալի տեխնիկատնտեսական և բնապահպանական նշանակություն:

Ատենախոսության բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 4 գլխից, ընդհանուր եզրակացություններից, 142 անուն օգտագործված գրականության ցանկից, 13 հավելվածից: Այն շարադրված է 171 համակարգչային տպագիր էջի վրա, ներառում է 39 նկար և 13 աղյուսակ:

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է ՀՀ լեռնահանքային ձեռնարկությունների պոչամբարների լեռնատեխնիկական, բնակլիմայական և

ինժեներաերկրաբանական պայմանների համակողմանի վերլուծությանը: Ուսումնասիրվել է հանքահարստացման պոչերի վերամշակման միջազգային փորձը, ներկայացվել են տարբեր երկրներում կիրառվող տեխնոլոգիական լուծումները, ինչպես նաև գնահատվել են դրանց կիրառման հնարավորությունները Հայաստանի պայմաններում: Հեղինակը ցույց է տվել, որ պոչերի վերամշակումը ոչ միայն բարձրացնում է օգտակար բաղադրիչների կորզման աստիճանը, այլև նպաստում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանը:

Երկրորդ գլուխը նվիրված է պոչամբարներում մետաղական բաղադրիչների տարածական և խորքային բաշխման օրինաչափությունների բացահայտմանը: Հեղինակի կողմից իրականացված քիմիական անալիզների, վիճակագրական մեթոդների և Datamine ծրագրային համալիրի միջոցով կառուցված եռաչափ մոդելների հիման վրա գնահատվել են պղնձի և մոլիբդենի տարածման առանձնահատկությունները Փուխրուտի, Ողջիի և Ձորատեղիի կոնսերվացված պոչամբարներում: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ֆլուտացիոն փորձարկումների արդյունքները, որոնցով հիմնավորվում է պոչանքային նստվածքների արդյունաբերական վերամշակման նպատակահարմարությունը:

Երրորդ գլուխը նվիրված է պոչամբարների դատարկման տեխնիկական միջոցների և տեխնոլոգիական սխեմաների համաշխարհային փորձի մանրամասն վերլուծությանը: Վերլուծության արդյունքում հեղինակը հանգել է այն եզրակացությանը, որ ներկայում կիրառվող մեթոդների զգալի մասը հատկապես մեծ խորությամբ և բարդ լեռնային ռելիեֆում տեղակայված գետային տիպի պոչամբարների համար սահմանափակ կիրառելիություն ունի: Հենց այդ հանգամանքն էլ հիմք է հանդիսացել նոր տեխնիկական լուծումների մշակման համար:

Չորրորդ գլուխը հանդիսանում է ատենախոսության հիմնական գիտական գործնական մասը: Այստեղ հեղինակի կողմից առաջարկվել է գետային տիպի պոչամբարներից պոչանքային նստվածքների հեռացման նոր արտոնագրված սարք,

ներկայացվել են դրա կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, ինչպես նաև մշակվել են մի շարք կատարելագործված տեխնիկական տարբերակներ: Առաջարկվող լուծումները տրվել են, հաշվի առնելով Հայաստանի լեռնային պայմանների առանձնահատկությունները, պոչամբարների մեծ խորությունները և աշխատանքների անվտանգության պահանջները: Առաջարկված տեխնիկական լուծումները ոչ միայն բարձրացնում են արտադրողականությունը, այլև կրճատում են նախապատրաստական աշխատանքների ծավալն ու ծախսերը:

Ատենախոսության մեջ ներկայացված արդյունքները վկայում են, որ հեղինակի կողմից ստացված գիտական նորույթը ակնհայտ է և հիմնավորված:

Ատենախոսության մեջ առկա են հետևյալ թերությունները

1. Ատենախոսությունում մանրամասն ուսումնասիրվել են գետային տիպի պոչամբարներում պղնձի և մոլիբդենի տարածման օրինաչափությունները, սակայն նպատակահարմար կլիներ ավելի հանգամանորեն ներկայացնել նաև մյուս արժեքավոր և ուղեկցող տարրերի (օրինակ՝ ոսկի, արծաթ, ռենիում և այլն) տարածական բաշխման առանձնահատկությունները և դրանց արդյունաբերական վերամշակման հեռանկարները:
2. Աշխատանքում առաջարկված տեխնիկական սարքի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը ներկայացված են բավականին մանրամասնությամբ, նպատակահարմար կլիներ այն համեմատել աշխարհում կիրառվող ժամանակակից նմանատիպ սարքերի հետ՝ ներկայացնելով ոչ միայն կառուցվածքային, այլև տեխնիկա-տնտեսական համեմատական ցուցանիշներ:
3. Ատենախոսության մեջ պոչամբարների դատարկման ընթացքում հիմնական ուշադրությունը կենտրոնացված է տեխնոլոգիական գործընթացի կազմակերպմանը, ցանկալի կլիներ, որ գնահատվեին նաև առաջարկված տեխնոլոգիայի կիրառման հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, մասնավորապես՝ փոշու առաջացման, տեխնոլոգիական ջրերի

կառավարման, հնարավոր արտահոսքերի և հետագա վերականգնողական միջոցառումների տեսանկյունից:

4. Ատենախոսությունում մշակված տեխնիկական լուծումները հիմնավորված են հիմնականում Հայաստանի Հանրապետության գետային տիպի պոչամբարների օրինակներով: Հետազոտության արժեքն ավելի կբարձրանար, եթե ներկայացվեր նաև նշված տեխնոլոգիայի կիրառելիության գնահատումը այլ երկրներում առկա նմանատիպ լեռնաերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմաններում:

5. Աշխատանքում կարևոր է ավելի մանրամասն անդրադառնալ պոչամբարների դատարկման ընթացքում պատվարի կայունության, նստվածքների հնարավոր սողքի երևույթների և գետտեխնիկական ռիսկերի գնահատման խնդրին, քանի որ դրանով է պայմանավորված առաջարկվող տեխնոլոգիայի անվտանգ կիրառումը:

Եզրակացություն

Կարեն Վալերիկի Հարությունյանի՝ «Գետային տիպի պոչամբարներից պոչանքային նստվածքների հեռացման եղանակների մշակումը» թեմայով ատենախոսությունն ավարտուն աշխատանք է, որտեղ ստացվել են կարևոր արդյունքներ: Աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ԻԴ.02.01- «Օգտակար հանածոների հանքավայրերի մշակում և շահագործում» մասնագիտությամբ:

Կարծիքը քննարկվել է ԵՊՀ, Աշխարհագրության և երկրաբանության
ֆակուլտետի՝ Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման
ամբիոնի ընդլայնված նիստում /արձանագրություն համար 9/, որին մասնակցել են
դոցենտ Վ.Մանուկյանը, ե.գ. դոկտոր, պրոֆեսոր Ս. Հայրոյանը, երկրաբ.-հանք.գ.թ.,
դոցենտ Ռ. Մովսեսյանը, ե.գ.թ., դոցենտ Շ. Խաչատրյանը, ե.գ.թ., դոցենտ Գ.
Գարեյանը, ե.գ.թ., դոցենտ Ս.Ներսեսյանը:

Երևանի պետական համալսարանի
Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի
Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների
հետախուզման ամբիոնի վարիչ՝



Վ.Մ. Մանուկյան

Երևանի պետական համալսարանի
Գիտական քարտուղար,
Բանասիրական գիտությունների թեկնածու՝

Մ.Վ. Հովհաննիսյան

«20» հուլիս 2026թ.

